

Բ. — Առիւծը կը խորհրդանշէ Ս. Մարկոսը երեք պատճառներով .

ա) Ան կը սկսի իր Աւետարանը Յովհաննու Մըկըրտչի պաշտօնովը, «Չայն բարբառոյ յանապատի» :

բ) Կենդանեաց թագաւորը տիպար մըն է Քրիստոսի արքունական արժանեաց, զոր Ս. Մարկոս այնքան երեւելի կ'ընծայէ :

գ) Արեւելեան աւանդութեան մը համաձայն, առիւծի ձագերը ծնած ժամանակ կը մեռնին, և երեք օր վերջ կը կենդանանան իրենց հօրը շունչովը, այս կերպով անոնք Յարութեան խորհրդանշան մը կ'ըլլան, ու այդ պատճառաւ է որ Ս. Մարկոս պատմիչ կոչուած է :

Գ. — Ս. Ղուկաս եզը կը մատնանշէ, վասն զի ան մասնաւորապէս կը հաստատէ Քրիստոսի քահանայութիւնը, և եզն ալ զօրին խորհրդանշանն է :

Դ. — Ս. Յովհաննէս Արծիւը կը մատնանշէ իր ներշնչման բարձր սլացքին խորհրդանշանը :

Ուրիշներ այս «կենդանիները» կը նկատեն իբր օրինակ Յիսուսի Մարմնառութեան, Չարչարանաց, Յարութեան և Համբարձման, ու կը կարծուի թէ անոնք կը ներկայացնեն Քրիստոսի չորեքկերպեան նկարագիրը իբր մարդ, թագաւոր, քահանայապետ և Աստուած :

Այս խորհրդանշանական կենդանիները միշտ կը ներկայացուին թեւաւոր : Այդ «չորս կենդանիներու» միութիւնը կը կազմէ այն խորհրդաւոր խորհրդանշանը որ կը կոչուի Չորեքկերպեան : Ուրիշ խորհրդանշան մըն է՝ կին մը որ կը ներկայացնէ նոր օրէնքը կամ Եկեղեցին : Ան թագազարդ է եւ կենդանիի մը վրայ բազմած, որ ունի չորս գլուխները նոյն խորհրդա-